

ԻՆՉՊԵՍ ԲԱՆՏԱՐԿՑԱԼԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑԵԼ ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍ ՔԱՌԻՆԹԻ ԲԱՆՏԵՐԻՆ

Եթե ունեք հոգեկան հիվանդության տեղ ընտանիքի մի անդամ, որը գտնվում է բանտում, Ծերիֆի http://www.lasd.org/lasd_services/correctional/mental_illness.html կայքէջը կարող է ընծայել օգտակար տեղեկություն: Եթե ուզում եք բանտի հոգեկան առողջության և բժշկական անձնակազմին տեղեկություն տալ ընտանիքի անդամի առողջության մասին, սեղմեք այս կայքէջում գտնվող Բանտարկյալի Դեղերի Տեղեկության Ձև ([Inmate Medication Information Form](#)) կապին: Տպեք, լրացրեք և ֆաքսով ուղարկեք այն՝ հետևելով ներքևի ցուցումներին: Այս ձևը անձնակազմին կզգուշացնի, որ զննի բանտարկյալին՝ իր առողջապահական կարիքների համար:

Եթե ձեր չունեք, կարող եք պատրաստել ինքնեղ ձեր զննումի խնդրանքը: Ձննումի համար ձեր խնդրանքը պետք է կատարվի անմիջապես և ընդգրկի հետևյալ տեղեկությունը: Այս ֆաքսը սկսեք՝

- | | |
|--------------------------------------|--|
| 1. Բանտարկյալի լրիվ օրինական անունով | 4. Բանտի վայրով |
| 2. Ծննդյան թվով | 5. Ընտանիքի հետ կապի տեղեկությամբ (հեռախոս, է-մամակ, ևլն.) |
| 3. Ինքնության Համարով | |

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող բանտարկյալների համար ընդգրկեք հետևյալ տեղեկությունը՝

- Նրա ախտանշանաչումը.
- Նրա հոգեբույժի անունը, հեռախոսի համարը և հասցեն.
- Անձի համար նշանակված դեղերը՝ անունով, դեղաչափով և օրվա ընթացքում դեղերի մատուցման ժամանակով.
- Եթե ինչ-որ հատուկ դեղ պարզվել է, որ եղել է անզոր կամ վտանգավոր և/կամ ունեցել է կողմնակի բարդություններ.
- Մոտավոր անցյալում իր անձի/ուրիշների նկատմամբ վտանգավոր վարվեցողության պատմությունը: Հակիրճ նկարագրեք դեպքերը և թե երբ են դրանք պատահել. և
- Եթե դեղը ընդունվել է որպես պայմանական ազատումի պայման, և եթե այդպես է, պայմանական ազատումը շնորհած պաշտոնյալի անունը և կապի տեղեկությունը.

Բանտի Հոգեկան Առողջության անձնակազմը պետք է իր ուրույն արժևորումը կատարի անձի վիճակի մասին և պայման չէ, որ ճիշտ նույն դեղերը նշանակի նրա համար:

Ծոսապ բժշկական վիճակ ունեցող բանտարկյալների համար, ինչպես՝ շաքարախտը, արյան բարձր ճնշումը, նոքաները, սրտի խնդիրները, և այլն, ովքեր ունեն վերջերս նշանակված դեղեր այդ վիճակների համար, ընդգրկեք բժշկի անունը, հասցեն և հեռախոսի համարը՝ ստուգման նպատակով:

Ֆաքսերը կարող են ուղարկվել օրը 24 ժամ, շաբաթը յոթը օր:

Բանտի Հոգեկան Առողջության Ծառայության Ֆաքսի Համարները՝
Տղամարդկանց Ֆաքս՝ 213-972-4002 Կանանց Ֆաքս՝ 323-568-4678

Ծերիֆի Բժշկական Ծառայությունների Գրասենյակի (ԲԾԳ) Ֆաքսի Համարը՝
Ծերիֆի ԲԾԳ՝ 213-830-0681

ՀիՇԵՔ՝ Եթե միայն հոգեկան առողջության տեղեկություն եք ուղարկում, խնդրում ենք այն ուղարկել Տղամարդկանց կամ Կանանց վերևի համարով (Բանտի Հոգեկան Առողջության Ծառայություն): Եթե ուղարկում եք և՛ հոգեկան առողջության և՛ բժշկական տեղեկություն, այդ տեղեկությունը պետք է ֆաքսով ուղարկեք Բանտի Հոգեկան Առողջության Ծառայության և Ծերիֆի Բժշկական Ծառայությունների Գրասենյակի համարներով: Ֆաքսի պատճենը պահեք ապագա հղումների համար:

Թարգմանական նյութամիջոցները Հոգեկան Առողջության Պաշտպանության Ծառայություններ, Ընկ-ին հայթայթել է Կալիֆորնիայի Նախագահային Իրավաբանական Խմբի Հաստատությունը: